

27552

336.2

7-88

15 JAN 2010

336.2

Ե-88

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ

ԳՐԱԴԱՐԱՆ



Ա. ՅԵՐԿՈՄԵՅՉՎԻԼԻ

ԱՊՈՐԻՆԻ

ԿԵՄ

ԿԱՄԱՅԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Ա.Ս.Ֆ.Խ.Զ. ՖԻՆԺՈՂԿՈՄԻ

ԹԻՖԼԻՍ — 1925 թ.



1. Ապօրինի կամ կամայական հարկեր

Դրամական բարենորոգումը մտցնելուց առաջ, Անգլիական հարկերի մասին օրենքները կազմում եր ժողովրդական կոմիսարների Սորհուրդը, իսկ հաստատում եր Կենտրոնական Գործադիր կոմիտեն:

Դրամական բարենորոգումը մտցնելուց հետո հարկերի մասին յեղած ղեկերները մշակում ե Միության ֆինանսական Մոսկվայում, իսկ հաստատում են նույն Միության ժողովումիսորհն ու Կենտգործկոմը:

Այդ օրենքներում նախատեսված են՝ ինչպես Անգլիական առանձին հանրապետությունների ժողովրդական կոմիսարների իրավունքներն ու պարտականությունները, նույնպես նաև տեղական գործկոմների իրավունքներն ու պարտականությունները:

Բոլոր հանրապետությունների ֆինանսական ձևերի կանոնները համախմբված են միութենական մասշտաբով, հետևապես, տեղական իշխանությունը չի կարող ինքնուրույնաբար վճռել հարկերի մասին յեղած օրենքները:

Հարկերին վերաբերող օրենքներում նախատեսված են այն բոլոր մասնաթղթերը, վոր կատարվում են հարկերից ու ռուբլիից՝ հոգուտ տեղական իշխանության: Բացի ՍՍՀՄ-ի դրամական միջոցներ գտնելու ասպարեզում, տեղական իշխանությունը վերապահված են վորոշ իրավունքներ հանձնելու զանազան տուրքեր՝ տեղական գործկոմների ոգտին:

Սակայն տեղական գործկոմիների սահմանած այդ հարկերն ու տուրքերը չպետք է ծանր բեռ դառնան գյուղացիության համար: Գոյութիւն ունեցող որենքների համաձայն՝ գյուղացիները պետք է վճարեն միայն գյուղհարկը:

Չնայելով այդ բոլորին, տեղական իշխանութիւններ, հակառակ գոյութիւն ունեցող որենքներին, շատ հաճախ անում են ապուրինի կարգադրութիւններ և հրատարակում են որենքներ, վորոնց հիման վրա նա հարկադրում են ազգաբնակչութիւնը: Այդ տեսակ ապուրինի կարգադրութիւնները հրատարակվում էյին նախքան դրամական բարենորոգում մտցնելը: Դրա պատճառը պետք է փնտրել գործկոմների տեղերում դրամական բաւարար միջոցներ չունենալու մեջ: Այն ժամանակ մենք չունեյինք կայուն արժույթ (վալյուտա): Մեր դրամը որովոր ընկնում էր, դառնում էր անարժեք: Ուստի, յետե տեղերում գործկոմները դիմում էյին ապուրինի միջոցների՝ ըացնելու իրենց նյութական աղբյուրները, գա դեռնասկանալի յեր:

Դրամական բարենորոգումը մտցնելուց հետո դրութիւնը փոխվեց արմատից: Մեր դրամն այլ ևս չի ընկնում, ինչպես լինում էր այդ առաջ: ԱՍՖՅՀ մեջ մըտնող առանձին հանրապետութիւններում ժողկոմատները պահելու համար միջոցներ են ըաց թողնվում նախահաշվային վորոշ դրամահատկացումներով:

Տեղական գործկոմների տրամադրութիւն տակ զըտնըվում են հատուկ դումարներ՝ հաստիքը (շտատը) պահելու, ինչպես նաև պետական այլ կարիքներ հոգալու համար:

Նկատի ունենալով այդ բոլորը, չափազանց կարևոր է կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ հարկերին ու տուրքերին վերաբերյալ ապուրինի հարկադրութիւնների դեմ՝ ինչպես ամբողջութեամբ այս կամ այն հանրապետութիւն մասշտաբով, նույնպես նաև առանձին գավառի մասշտաբով:

Միանգամայն անհնարին է անուշադիր թողնել այս բոլորը, վոր այդ ասպարեզում կատարվում է տեղերում: Միայն Ալտայան նահանգում յերեան է հանվել 155 տեսակ ապուրինի հարկ: Հարկ էր դրվում վառարանների, ծխնելույզների, սայլերի վրա և այլն:

Մեզանում, Անդրկովկասի սահմաններում ել պակաս չեն ապուրինի հարկերը: Գյուղացիութիւնը լավ չի հասկանում, թե հարկը գանձելու մասին տված այս կամ այն կարգադրութիւնն որինալմը և արդյոք, թե՞ ապուրինի: Այդ հիման վրա, նա հարկը վճարում է միայն այն պատճառով, վոր համոզված է, թե տեղական իշխանութիւն կարգադրութիւնն որինական է: Այդ հանգամանքը առիթ է տալիս գյուղացիներին դժգոհ լինելու Խորհրդային Իշխանութիւնից, ուստի պետք է վերջ տալ այս դրութիւնը:

Սամարեդի Գործկոմն իրականացրել էր մի վորոշում, վոր վերաբերում էր՝ այսպես կոչված՝ առեկտրաշրջանառութիւն հարկադրմանը: Այդ վորոշման համաձայն՝ 50 ուրլու չափով հարկի տակ էյին դրվում թե՞, մասնավոր վաճառականները, և թե՞ պահիմնարկները:

Յեվլախի Գործկոմը ամեն մի փութից տուրք էր հավաքում Յեվլախի կամուրջով անցնելու համար: Տեղական Գործկոմին իրավունք է տրվում տուրք հավա-

քելու ան կամուրջով անցնելու համար, վոր շինված է տեղական Խորհրդային Իշխանության ջանքերով: Ուստի, Յեվլախի Գործկոմի հիշյալ գործողությունն ապուրինի յե, վորովհետև նա չէ շինել այդ կամուրջը:

Աղղամի Գործկոմի վորոշումով սահմանված եյին մի շարք ապուրինի տուրքեր յուրաքանչյուր շնչից, միլիցիոներների ձիերի համար կեր ձեռք բերելու նպատակով:

Դարաքիլիսի գավառի Ղշլաղ գյուղում բնատուրք է սահմանված գյուղական խորհուրդները պահելու համար: (Աբխազիայի) Սամուրգական գավառում բնական հարկ եր տրված առևտրա — արդյունաբերական ձեռնարկների վրա, 10 տոկոս հավելումով՝ իբրև ճանապարհներ շինելու ֆոնդ:

Հարկային գործը կարգի քցելու հարցը հաճախ խորհրդակցության եր տրվում Անդրֆեդերացիայի յերկրային բարձր որգաններում, ամեն տեսակ կամայական հարկերի դեմ միջոցներ ձեռք առնելու նպատակով: Այդ առթիվ հաճախ հանվել են համապատասխան վորոշումներ:

Բայց չնայելով դրան, տեղերում դարձյալ մըտցվում են ապուրինի հարկեր:

Ներկա տարվա ընթացքում յերևան եյին հանվել հետևյալ ապուրինի հարկադրումները. Գանձակ քաղաքում սահմանված է յեղել շուկայի տուրք յեկվոր գյուղացիներից: Յուրաքանչյուր բեռնակիր անասունից գանձվում է 20 կոպեկ, իսկ քաղաքում կանգնող յուրաքանչյուր սայլից — 30 կոպեկ: Նուխում է Շամախում շուկայի տուրքը կապալով տրված է յեղել մասնավոր մարդու, ըստ այսմ, Նուխում — 400 ոտբլով, իրավունք վերապահելով կապալառուին՝ այդ տուրքը

սահմանել և գանձել այնպես ու այն չափով, ինչպես հարմար կհամարի ինքը: Այդ հիման վրա, կապալառուն Նուխում յուրաքանչյուր սայլից շուկայի տուրք է վերցնում մի ոտբլի, անկախ այն բանից, բարձա՞ծ է արդյոք սայլը, թե՞ բոլորովին դատարկ է: Շամախում կապալառուն յուրաքանչյուր յեղից կամ գոմեշից վերցնում է մեկական ոտբլի, իսկ ամեն մի վոչխարից — 30 — 40-ական կոպեկ: Գանձակում և Սաչմազում կատարվում է նույն բանը, միայն այստեղ այդ գործը կատարողները հանդիսանում են վոչ թե կապալառուները, այլ կոմունալ Գործակալները: Աղղամի գավառում գյուղհարկ վճարող հարկատուները լրացուցիչ կերպով տալիս են հատուկ մի տուրք, միլիցիոներների ձիերին կեր գնելու համար:

Գորիի գավառում (Ցագվերում) տուրք են հավաքում այնտեղ բժշկվելու գնացողներից, ըստ այսմ, ամենքի համար ել տուրքի միեւնույն չափն է սահմանված, անկախ այն բանից, թե տվյալ մարդը ծառայող է արդյոք, բանվոր է, կամ առևտրական, և անկախ այն բանից, թե նրա ընտանիքը քանի հոգուց է բաղկացած և այլն:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, մի շարք տեղերում նկատվում է չափազանց շատ անդամ տուրքի գանձումն անասունի հում մթերքների գննության համար: Այդ ուղղությամբ մարդիկ այնքան տարվում ու հեռու յեն գնում, վոր սանիտարական գննության համար տուրք են հավաքում նաև այնպիսի կետերում, վորտեղ վոչ մի գննություն կատարված չի յեղել:

վերևում թված բոլոր հարկերից ու տուրքերից գատ, վորոնք հանդիսանում են ապուրինի, Անդրֆին-ժողովմատի Լիազորները տեղերում պատահում են նաև այն տեսակ հարկադրումների, վորոնք բացարձակորեն ալլանդակ բնույթ են կրում: Այսպես որինակ, Թիֆլիզի Գործկոմը սույն թվի հուլիս ամսին ստիպողաբար տարածում էր Թիֆլիզի տնատերերի մեջ պարտագիր վորոշումների ժողովածուն: Ճիշտ այդպես նույն այդ Թիֆլիզի Գործկոմը սահմանել էր ստիպողական տուրք՝ կրովու թոքախտի դեմ:

Յեթե մենք մանրամասն ուսումնասիրելու լինենք Անդրֆեդերացիայի քաղաքներն ու գյուղերը, կարող ենք յերևան հանել չափազանց շատ ապուրինի հարկեր ու տուրքեր, վորոնք ծանր բեռան պես ճնշում են ազգաբնակչության մեջքը:

Բացարձակ անթույլատրելի յե հանդիսանում այդ տեսակ ապուրինի հարկաճանությունը (հարկահավաքը), մանավանդ գյուղական միջավայրում, վորտեղ ավելի տուժում է գյուղացիության աշխատավոր մասը:

Խորհուրդային իշխանության մասին գյուղացին դատում է տեղական իշխանության դեպի ինքը ցույց տված որինական կամ ապուրինի վերաբերմունքով: Այդ պատճառով, կամայական հարկերի ու տուրքերի վերացնելու խնդիրը հանդիսանում է անհետաձգելի:

2. Կոիվ կամայական հարկերի դեմ

Ինչպես վերևում արդեն ասացինք, խորհրդային իշխանության յերկրային կառավարչական բարձրագույն մարմինները միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի

բնակչությունն ազատեն ապուրինի հարկադրումից: Այդ տեսակետից արված են համապատասխան քայլեր այն ուղղությամբ, վոր հետագայում տեղի չունենան նման հարկահանություններ:

Սակայն, պետք է նկատել, վոր վերահսկողության ապարատը դեռ այնքան լավ սարքի չի քցած, վորպեսզի ստացվի տեղերում կատարվող ապուրինի հարկադրման բոլոր դեպքերի լրիվ պատկերը: Ինքն ազգաբնակչությունը, մանավանդ գյուղական վայրերում, լավ չի հասկանում այն վորոշումները, վորոնցով սահմանվում են ապուրինի հարկադրումները: Դա առաջ է գալիս, զլխավորապես, այն բանից, վոր հենց ինքը Խորհրդային պետությունը նորերս միայն, որինական կարգով, սահմանեց ազգաբնակչությունը հարկի տակ դնել՝ ինչպես դրամով, նույնպես նաև բնահարկով:

Բացի այդ, տարբեր կոմիսարիատներ տարբեր ձևով եյին մոտենում հարկադրման հարցին, և յուրաքանչյուրը հարկեր էր սահմանում իր իմացածի պես. Ֆին-ժողկոմը հարկ էր հավաքում դրամով, Պարենժողկոմը — բնաբերքով, Աշխժողկոմը — կոռ ու բեկարով և այլն:

Ճիշտ է, այժմ այդ բոլոր հարկերը վերացված են, և նրանց փոխարեն սահմանված է միասնական գյուղատնտեսական հարկը, բայց տեղական ազգաբնակչությունը դեռ չի յուրացնել այն միտքը, վոր գյուղացիությունը հարկադրվում է միայն մի տեսակ հարկով, և վնչ թե բազմաթիվ հարկերով: Գյուղացիների գիտակցության մեջ հարկերի ուղիղ պատկերացման արմատնալուծն մեծ արդելք են հանդիսանում տեղական

իշխանության ամեն տեսակ ապօրինի վորոշումները՝ հարկեր մոգոնելու ասպարեզում:

Պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի տեղերում կամայական հարկեր չլինեն: Անհրաժեշտ է պատասխանատվության յենթարկել այն բոլոր պաշտոնյաներին, անկախ նրանց պաշտոնից, վորոնք տվյալ շրջանի սահմաններում ապօրինի հարկեր են սահմանում ու գանձում:

Սակայն, այդ բոլորը կատարելու համար անհրաժեշտ է, վորպեսզի ինքը ազգաբնակչութունն ոգնության գա խորհրդային իշխանությանը՝ ապօրինի տուրքերն արմատախիլ անելու գործում: Յուրաքանչյուր գյուղացի, յուրաքանչյուր բանվոր պետք է գիտակցի, թե անհրաժեշտ է՝ իր ույժերի չափով՝ ոգնություն ցույց տալ կենտրոնական իշխանությանը՝ տեղերում հարկեր մոգոնելու դեմ կռվելու գործում:

Հակախորհրդային կուսակցությունների ու խմբավորումների առանձին ներկայացուցիչներ կսկսեն չաքախնդալ տեղական իշխանության ամեն մի ապօրինի կարգադրության առթիվ, աշխատելով ազգաբնակչության անբավականությունն ոգտագործել իրենց հակահեղափոխական քաղաքական նպատակների համար: Հենց այդ պատճառով էլ նրանք միջոցներ ձեռք չեն առնի կամայական հարկադրումների դեմ:

Այդ հանգամանքն ավելի էս պարտավորեցնում է բանվորներին ու ամենաաղքատ գյուղացիներին — կենտրոնական իշխանությանը տեղեկացնել, նրան իրագեկ անել տեղերում յեղած ամեն տեսակ ապօրինի հարկերի ու տուրքերի մասին:

Գյուղացիները լիովին հնարավորություն ունեն կռվելու ամեն ապօրինի կարգադրությունների դեմ: Յեթե գոյություն ունեցող որենքները լավ չհասկացող այս կամ այն գյուղացին տեղում տրված հարկի որինական կամ ապօրինի լինելու մասին հարց կբարձրացնի հասարակական կազմակերպությունների դիմաց, — նա անպայման կարող է փոխել տալ այդ վորոշումը: Վերջապես, գյուղական վայրերում կան զանազան տեսակ կոոպերատիվ միություններ, վորոնց ներկայացուցիչները շատ հաճախ գալիս են քաղաք: Այդ ներկայացուցիչները լիովին հնարավորություն ունեն ստանալու ձիշտ տեղեկանքներ տեղական իշխանության այս կամ այն վորոշման որինակ կամ ապօրինի լինելու մասին:

Այդպիսով կենտրոնական իշխանությունը հնարավորություն կունենա հետևելու, թե տեղերում ինչ է կատարվում այդ ասպարեզում, է կարող է ամենախիստ միջոցները ձեռք առնել այն մարդկանց դեմ, վորոնք մեղավոր են ապօրինի կարգադրություններ հրատարակելու մեջ: Դրա հետ միաժամանակ, կենտրոնական իշխանությունը միջոցներ ձեռք կառնի ապօրինի տուրքերին անմիջապես վերջ տալու:

3. Գյուղացիներ վնարում են միայն գյուղատնտեսական հարկ

Տեղերում ամեն տեսակ ապօրինի հարկերի դեմ կռվելը հեշտանում է այն բանով, վոր գյուղական տնտեսությամբ պարապող գյուղացիների համար սահմանված է միայն մի հարկ, այն է՝ գյուղատնտեսական

հարկ: Գյուղացին պետք է իմանա, վոր համաձայն ՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարներին Նորհրդի հրատարակած որենքի, նա կարող է հարկադրվել միմիայն գյուղատնտեսական հարկով: Ամեն տեսակ կարգադրություն՝ (յեթե այդպիսին կան տեղական իշխանությունը) գյուղացիներից վոր և է լրացուցիչ հարկ գանձելու մասին՝ կըհակասի գոյություն ունեցող որենքներին, ուստի անհրաժեշտ է հոգ տանել այդ կարգադրությունը վերացնելու մասին:

Որենքի մեջ պարզ ու վորոշ ասված է.

«Միասնական գյուղատնտեսական հարկ վճարողները չեն հարկադրվում գյուղական տնտեսություն վրա ընկնող ուրիշ վոր յեվ է հարկերով կամ տուրքերով, քացի պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ վճարներին»:

Ի դեպ, պետք է նկատել, վոր պարտադիր ապահովագրության տարբեր տեսակները որենքով նախատեսված չեն Անդրկովկասի գյուղական վայրերում:

Վրաստանում կա պարտադիր ապահովագրության յերկու տեսակ:

1. Ապահովագրություն կրակից և 2. անասունի ու ձիերի ապահովագրություն, վոր մտցրած է Թիֆլիս, Քութայիս, Փոթի, Բաթում և Սուխում քաղաքներում:

Հայաստանում պարտադիր ապահովագրությունը մտցրած է Յերևան ու Լենինական քաղաքներում և Ջանգեզուրում, իսկ Ադրբեյջանում — Բազու և Նուխի քաղաքներում:

Միմիայն գյուղական տնտեսություն յեկամուտներով ապրող մարդը չի կարող դրվել ուրիշ վորևէ հարկի տակ, քացի միասնական գյուղատնտեսական հարկից:

Գյուղում կարող են լինել ախպիսի գյուղացիներ, վորոնք պարապում են վո՛չ միայն գյուղատնտեսությունում, այլ և առևտրով, արդյունաբերությունում և այլն: Այդ տեսակ գյուղացիները պետք է առանձին հարկի տակ դրվեն, վորովհետև նրանք յեկամուտ են ստանում վո՛չ միայն գյուղական տնտեսությունից, այլ և առևտրից ու արդյունաբերությունից: Իհարկե, արդյունաբերողների թվին չեն պատկանում այն տնայնագործներն ու արհեստավորները, վորոնք զբաղվում են իրենց արհեստով առանց վարձու աշխատանքի: Յեթե նրանք հարկադրված են միասնական գյուղատնտեսական հարկով, այդ դեպքում նրանք ազատվում են մյուս տեսակ բոլոր հարկերից, ինչպես այն գյուղացիք, վորոնք պարապում են բացառապես գյուղատնտեսությունում:

Որենքում ասված է.

«Գյուղական այն արհեստավորներն ու տնայնագործները, վորոնք, առանց ոգտվելու վարձու աշխատանքից, զբաղվում են իրենց արհեստով անձամբ, կամ իրենց ընտանիքի անդամների ոգնությունով, վոր նրանց հետ միասին կազմում են մի տնտեսություն (մի ծուխ), — ազատվում են հասույթահարկից, յեթե վճարում են միասնական գյուղատնտեսական հարկ: Հասույթահարկից ազատվում են նույնպես միասնական գյուղատնտեսական հարկ վճարող այն արհեստավորներն ու տնայնագործները, վորոնք պահում են միայն մի վարձու բանվոր, և վորոնց տնայնագործությունում ու արհեստով պարապելը ոժանդակ նշանակություն ունի նրանց տնտեսության համար: Հիշյալ յերկու դեպքում ել մանկահաս աշակերտները հաշվի չեն առնվում, յեթե նրանք յերկու հոգուց ավել չեն»:

Գործկոմները կարող են վորոշում հանել միանվագ աուրք ստիմանելու մասին. այսպես որինակ, տուրք՝ ձեռքով կամ բեռնով շուկա և հրապարակ ապրանք բերելու, վաճառելու համար. տուրք՝ այն ծառայություններին համար, վոր Գործկոմը ցույց է տալիս տե-

դական ազգաբնակչությանը, շինելով կամուրջ և այլն:

Բայց այդ բոլոր տուրքերը չպետք է ընկնեն այն յեկամուտների վրա, վոր գյուղացին ստանում է գյուղական տնտեսությունից, վորովհետև դրա համար նա վճարում է գյուղատնտեսական հարկ:

Յեթն գյուղացին իր անասունը քշում է քաղաք՝ ծախելու, այդ դեպքում նա տուրք չպիտի տա իր անասունը վաճառելու իրավունք ստանալու համար: Ճիշտ այդպես ել որենք չկա, վորի հիման վրա գուղացիներից տուրք պիտի գանձել այն բանի համար, վոր նրանք իրենց պատկանող գյուղատնտեսական մթերքները բերել են քաղաք՝ ծախելու: Գործկոմն իրավունք ունի տուրք հավաքել այն գյուղացիներից, վորոնք զբաղվում են պարենավորման մթերքների առ ու ծախսով, վորովհետև այդ տեսակ առ ու ծախսը գյուղացուն տալիս է յեկամուտ, բացի այն յեկամուտից, վոր նա ստանում է իր հիմնական զբաղմունքից, այն է՝ գյուղական տնտեսությունից:

Շատ հաճախ գյուղական վայրերում տուրք են սահմանում՝ գյուղխորհուրդներն ու գավառական խորհուրդները պահելու, դպրոցներն ու հիվանդանոցները պահելու, կամուրջները նորոգելու համար և այլն:

Յեթն այս բոլոր ձեռնարկանքները կյանքի մեջ իրականացվում են ստիպողաբար, այդ դեպքում դրանք հանդիսանում են ապուրիսի:

Ներկա տարվա ընթացքում մենք ձեռնարկում ենք ստեղծել գավառակային կամ ռայոնական բյուջե, ըստ այսմ, խորհուրդները տեղերում ունեն իրենց վորոշ, որենքով սահմանված, մասնատրությունները՝ գոյություն ունեցող հարկերից:

Ի՞նչպես կովել ապուրիսի հարկերի դեմ

Ապուրիսի հարկեր մտցնելու դեմ կովելու գործում շատ բան է կախված հենց իրենց՝ գյուղացիների ցանկությունից: Առանց ազգաբնակչության լայն խավերի ոգնության՝ բանվորա—գյուղացիական իշխանությունը կը դժվարանա կովել կամայական հարկերի դեմ: Ամեն մի գյուղացի պետք է շահագրգռված լինի այն միջոցներով, վոր խորհրդային իշխանությունը ձեռք է առնում՝ ամրացնելու հեղափոխական որինականությունը: Տեղական իշխանության կատարած ամեն տեսակ որինախախտության մասին գյուղացին պետք է իրազեկ անի (իմաց տա) գավառակային կամ ռայոնական գործկոմներին: Այն դեպքում, յերբ վերջիններս կը հրաժարվեն միջոցներ ձեռք առնել ապուրիսի կարգադրություններ հրատարակելու մեջ մեղավոր մարդկանց դեմ,—գյուղացին իր բողոքը պիտի հասցնի Դավֆինբաժնին, վորը այդ մասին անմիջապես տեղեկացնում է համապատասխան հանրապետության ֆինոտդկոմի լիազորին:

Հարկատուները ունեն նաև մի ուրիշ հնարավորություն ժամանակին կասեցնելու (դադարեցնելու) ապուրիսի հարկերի գանձումը: Նրանք կարող են դիմել գավառում յեղած դատախազական իշխանությանը, վորը պարտավոր է ձեռք առնել համապատասխան միջոցներ:

Կարող են պատահել դեպքեր, յերբ այս կամ այն գյուղացին չի ուզում իր վրա վերցնիլ տեղական իշխանության հարկեր մոգոնելու դեմ կովելու նախաձեռնությունը: Այդպիսի դեպքերում նա կարող է այդ բանի դեմ կոնվ մղել մեր լրագրների ոգնությամբ: Այնքան ել դժվար չէ այդ մասին տեղեկություն տա

գյուղթղթակցին կամ ուղղակի գրագետ մի մարդու, վորը ամբողջ յեղելության մասին կհայտնի մամուլին:

Այդպիսով, գյուղացիները բազմաթիվ հնարավորութիւններ ունեն՝ կովելու տեղական իշխանության մտքորած ապօրինի հարկերի դեմ: Կենտրոնական իշխանութիւններ միայն հարկատու գյուղացիների ոգնութեամբ կարող եւ վոչնչացնել կամայական հարկերը եւ հենց դրանով եւ պաշտպանել գյուղի մանր արտադրողներին շահերը:

Կարևոր եւ, սակայն, վորպեսզի վոչ մի գյուղացի անուշագիր չթողնի հարկադրման ասպարեզում այն բոլոր ապօրինի կարգադրութիւնները, վորոնք կարող են տեղի ունենալ ամեն տեղ, մանավանդ գյուղական վայրերում:

5. Ինֆրահարկադրում

Տեղական հարկամոգոնումի դեմ մի շարք միջոցներ ձեռք առնելուց հետո մենք պատահեցինք ապօրինի հարկադրման ուրիշ դեպքերի՝ կամավոր ինքնահարկադրման անվան տակ: Տեղական իշխանութիւններ բարեհաճում եւ նախաձեռնութիւն ցույց տալ դպրոց, հիւփանդանոց եւ այլն շինելու գործում: Այդ աշխատանքները կատարելու համար միջոցներ չկան: Այդ դեպքում Գործկոմը դիմում եւ, այսպես կոչված, ինքնահարկադրման միջոցին, վորի ետեւումն էլ այն եւ, վոր գյուղացիք իրենք ցանկութիւն են հայտնում՝ տուրք սահմանելու այս կամ այն ձեռնարկութեան ոգտին:

Շատ հաճախ ինքնահարկադրումը կիրառվում եւ կյանքի մեջ այնպիսի ձևով, վորը չի նախատեսված

այդ առթիւ գոյութիւն ունեցող վոչ մի որեւորով: Համարվում եւ գյուղական ժողով, վորը, յերկու-յերեք նախաձեռնողների ազդեցութեան տակ, վորոշում եւ կայացնում, հաճախ մեծամասնութեան կամքի հակառակ, սահմանել ինքնահարկադրումն՝ այս կամ այն գործի ոգտին: Ըստ այսմ, ուշադրութեան չի առնվում այն գյուղացիների տեսակետը, վորոնք չեն կամենում մասնակցել ինքնահարկադրմանը: Ժողովի վորոշումով՝ հարկադրման յենթարկվում են վոչ միայն այն գյուղացիները, վորոնք ձայն են տվել ինքնահարկադրմանը, այլ եւ նրանք, վոր բոլորովին ներկա չեն յեղել ժողովին: Վորոշումը իրականանում եւ տեղական իշխանութեան մասնակցութեամբ, ստիպողական կարգով: Ինքնահարկադրման այդ ձևը, ինչպես նաեւ կյանքի մեջ այն իրականացնելու յեղանակը, հանդիսանում են ապօրինի հարկի ամենատարածար ձևը:

Եւ վորտեղ եւ գյուղացիների կամովին մասնակցութիւնը ինքնահարկադրմանը, յեթե այդ վորոշումը կայացել եւ նրանցից շատերի կողմից հակառակ, եւ յեթե այդ տեսակ հարկի գանձումը կատարում եւ տեղական իշխանութիւնը, այն եւ անպիտանաբար:

Ամենավատ ձևի «ինքնահարկադրումը» տեղի յե ունենում մեր գյուղացիների մեջ Անդրկովկասի Զրային տնտեսութեան մարմինների (որգանների) միջոցով: Անդրժողովարդական 1923 թվի դաստիարակչական 13-ի վորոշման համաձայն, իրավունք եւր վերադասված Անդրժողովարդականութեանը, պայմանագրով համաձայնութեան գալով շահագործված գյուղացիների կողմից իրենց եւ Զրային հիմնարկների տերերի հետ, սրանցից դրամ գանձել կամ բնական պարհակ պահանջել՝ Զրային վարչութիւնը:

22809-59
18



սրահելու համար: Անդրջրտնտեսության որդանները այդ վորոշումը բացատրել էին այն մտքով, վոր նրանք իրավունք ունեն սահմանելու ջրի համար վճար, իրենց գործակալների ոռճիկի չափը և այլն:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, Ջրտնտեսության առանձին ներկայացուցիչները տեղերում ամեն քայլափոխում խախտում էին հիշյալ վորոշումը և, փոխանակ շահագրգռված կողմերի հետ համաձայնության գալու, իրենք ինքնազուլիս հանում էին միակողմանի վորոշում այն մտքով, վոր գյուղացիները հարկի տակ էին դրվում հոգուտ ջրային գործի: Մեր ձեռքին և գտնվում Ղազարի ջրային շրջանի նախահաշիվը հաստատելու նպատակով կազմված հանձնաժողովի 1924 թվի ոգոստոս 24-ի նիստի արձանագրությունը, վորից պարզ յերևում է, վոր Անդրժողովխորհի վորոշումները խախտվում էին ամենախայտառակ ձևով: Հավաքվել են Ջրային տնտեսության ներկայացուցիչները հանձինս՝ Ղազարի ջրային շրջանի կառավարիչ Ջայցի ու Արստաֆայի ջրային ռայոնի լիազորների խորհրդի անդամների և իրենց համար վորոշում են կայացրել, վորով ոռճիկ են նշանակել—Ջրաբաշխին (միրաբին) 70 ուրլի, նրա ոգնականին — 30 ո., Ջրաբաշխի գործավարին — 25 ո. իսկ նրա միլիցիոներին — 25 ուրլի: Այդ հարցը վրձնելիս ներկա չեն յեղել գավգործկոմի նախագահի տեղեկալը, հողբաժնի վարիչը, վորոնք, պարզ է, հրավիրված էին միայն նրա համար, վորպեսզի այդ վորոշմանը արվեր տեղական գյուղացիների հետ համաձայնության գալու բնույթ, վորովհետև հենց այդ գյուղացիների հաշվին պիտի իրականանար հիշյալ վորոշումը: Գյուղացիներն այդ հաշվի մասին իմացան, իհարկե, այն ժա-

մանակ միայն, յերբ սկսեցին նրանցից փող վերցնել: Յեղ դա կոչվում է «համաձայնություն» շահագրգռված անձերի հետ, այն էլ՝ նախատեսված Անդրժողովխորհի վորոշման մեջ: Հավաքվել, իրենց ոռճիկ են նշանակել և ցրվել են հանգիստ խոճով:

Ինչպես յերևում է վերևում բերած վորոշման արձանագրությունից, ժողովը, ի լրացումն այդ տեսակ «համաձայնության», վորոշում է կայացնում այն մասին, վոր լիազորների խորհրդի չորս անդամին վճարվի յուրաքանչյուր նիստի համար 2-ական ուրլի, հաշվելով այդ բանը 1924 թվի հուլիսի 1-ից:

Այդ կարգի «համաձայնությունները» վրդովում էին գյուղացիներին, վորոնք, տեղական խորհրդային որդանների աջակցությամբ, շատ հաճախ, իրենց վերջովմունքի մասին իրազեկ էին անում կենտրոնական իշխանությունը, վորպեսզի դա անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի այդ կամայականությունների դեմ:

Նման ապորինի տուրքերից ու գանձումներից խուսափելու նպատակով, Անդրժողովխորհը 1924 թվի սեպտեմբերի 29-ին հանում է հատուկ վորոշում, վորտեղ պարզ և վորոշ ցույց է տրվում այն անհրաժեշտությունը, վորով պիտի գյուղացիները կամուլին միանան և վորոշում կայացնեն իրենց հարկադրման մասին՝ հոգուտ ջրային տնտեսության:

Չնայելով այս բոլորին, Անդրկովկասի Ջրտնտեսության նույն այդ ներկայացուցիչները շարունակում են տեղերում իրենց հուշակավոր նիստերը, վորոնց նպատակն է՝ գյուղացիներին հարկի տակ դնել: Այսպես որինակ, 1924 թվի հոկտեմբերի 29-ի նիստը վորոշում է հանում՝ ջրից ոգավորների վրա հարկ դնել—մի դեսյա-

տին ջրովի մարդագետնից վերցնել $5\frac{1}{2}$ կուպեկ, տեղական տիպի մի ջրաղացից — 57 կուպեկ և այլն: Այդ վորոշումներն իրականացնում էին ստիպողաբար, տեղական վարչության մասնակցութեամբ: Դրան ապացույց է Ղազախի Գավգործկոմի 1924 թվի հոյեմբեր 2-ի № 5.333 գրության պատասխանը Ղազախի Գավֆինբաժնին: Այդ ամենը ցույց է տալիս, վոր տեղերում Անդրկովկասի Զրահտեսության որգանները արհամարհում, անտես էլին առնում Անդրժողովսոցի վորոշումը: Ապրենի տուրքերը շարունակում էին գոյութիւն ունենալ, վորը, իր հերթին, ավելի ևս վատացնում էր արգյունաբերող-գյուղացիների ապրուստի պայմանները: Ղազախի ԳՖՖ սույն թվի մայիսի 6-ի իր գրութեամբ հայտնում է Անդրֆինժողկոմի Լիազորին այն մասին, թե այդ կարգի «կամովին համաձայնութիւնները» Ղազախի գյուղացիութեան յուրաքանչյուրի վրա նստում են մինչև 25 ուրբլի: Ամբողջ գավառի վերաբերմամբ այդ գումարը հավասար է նրա մի գավառակի տարեկան նախահաշվին:

Պարենավորման մթերքների գանձումը կատարվում է առանց պետութեան և տեղական ազգաբնակչութեան համապատասխան վերահսկողութեան, ու ազգաբնակչութեանը՝ դրամ և մթերքներ հավաքելու գործն ընդունում է իրեն մի հարկ, վոր սահմանել է Սորհուրդների կենտրոնական իշխանութիւնը: Այն ինչ, այդ կարգի տուրքերը, համաձայն որոնքի ճիշտ իմաստի, կարող են տեղի ունենալ միայն գյուղացիների հետ իրօք կամովին համաձայնութեան գալուց հետո:

6. Ի՞նչպես պէ՛տք է կատարվի ինքնահարկադրումը

Մենք արդեն մատնանիշ արինք Անդրժողովսոցի և Անդրկենտգործկոմի 1924 թվի սեպտեմբեր 29-ի վորոշումն այն մասին, թե տեղական կարիքները հողալու ցանկութեամբ՝ ամեն տեսակ ինքնահարկադրումն կատարվում է միմիայն կամովին: Ինքնահարկադրման դեպքում խոսք չի կարող լինել վո՞չ մի ստիպողական միջոցի մասին:

Որենքն ասում է.

«Տեղական հասարակական ամեն տեսակ կարիքները (ուսումնա-կրթական, բուժական հիմնարկների, սոցիալ-ապահովութեան հաստատութիւնների, ինչպես նաեւ տեղական բարեկարգութեան կարիքները քաղաքացիութեան) հողալու համար ազգաբնակչութեան ինքնահարկադրումը թույլ է տրվում՝ քաղաքացիների կամովին համաձայնութեան սկզբունքով, քաղաքացիների, վոր այդ նպատակով միացել են՝ սահմանված կարգով թույլատրված՝ կազմակերպութիւնների մեջ, կամ՝ կամովին իրենց վրա յեն վերցրել վորոշ պարտականութիւններ:»

Պարզ է, վոր ինքնահարկադրման մասին լինելիք վորոշումները կարող են կայանալ միայն հենց իրենց՝ հարկատուների համաձայնութեամբ: Որենքը նախատեսել է նաև այն դեպքերը, յերբ այս կամ այն ճանապարհով գյուղացիների ժողովն ստիպված է լինում ընդունել ինքնահարկադրման վորոշումները: Ասենք, թե այս կամ այն գյուղացին ներկա չի յիղել այն ժողովին, վորտեղ անցել է այդ վորոշումը, այնուամենայնիվ, նրան ստիպում են վճարել, և դա համարվում է ինք-

նահարկադրումն: Նույն բանն է կատարվում նաև այն գյուղացիների հետ, վորոնք դեմ են յեղել ինքնահարկադրմանը. վորպեսզի հնարավոր լինի այդ տեսակ անիրավ վորոշումներից ազատ պահել այն գյուղացիներին, վորոնք չեն կամենում մասնակցել ինքնահարկադրմանը, Անդրկիկ-ի և Անդրժողովուրդի վերոհիշյալ վորոշման մեջ մտցրած է մի հատուկ կետ, վորը ասում է.

«Ինքնահարկադրման մասին յեղած այն վորոշումները, վոր նիստերին, հավաքույթներին ու այլ անուն կրող ժողովներին ընդունված են յեղել քվեարկությանը մասնակցող քաղաքացիների ծայերի մեծամասնությամբ, պարտադիր չեն այն անձների համար, վորոնք չեն մասնակցել ժողովին, կամ թեկուզ մասնակցել են ժողովին, բայց չեն մասնակցել քվեարկությանը յեղ կամ թե հակառակ ծայն են տրվել ընդունված վորոշմանը»:

Յերկրային բարձրագույն իշխանության այս վորոշումը կատարյալ յերաշխիք է տալիս ամեն մի գյուղացու այն բանի համար, վոր առանց նրա ցանկաւթյան, նրա վրա չի կարող հարկ դրվել՝ ինքնահարկադրման անվան տակ:

Անհրաժեշտ է, ապա, մատնանշել նաև այն, վոր ինքնահարկադրման վերաբերյալ վորոշումները պետք է կիրարկվեն կյանքի մեջ առանց տեղական վարչության մասնակցության: Այնտեղ, ուր գանձումը կատարվում է իշխանության ուշժով, խոսք անգամ չի կարող լինել այն մասին, թե մարդիկ կամովին են մասնակցել ինքնահարկադրման վորոշումին: Որենքով նախատեսանված է նաև այդ բանը, վորովհետև այնտեղ պարզ ու վորոշակի ասված է.

«Արգելվում է տեղական ֆինանսական ու վարչական մարմինների. (ինչպես նաեւ գյուղական մարմինների) մասնակցությունը ինքնահարկադրման հարցն անցկացնելու, վեճերը վորոշելու, ինքնահարկադրման կարգով քաղաքացիներից ստանալիք մուծումները զանձելու գործում, բացի այն դեպքերից, վորոնք նախատեսանված են նախընթաց 3-րդ հոդվածով»:

Իսկ յերրորդ հոդվածն ասում է, թե ինքնահարկադրման հարցերի պատճառով առաջացած բոլոր վեճերը կարող են վճովել դատական կարգով:

Այդ վորոշումը ցույց է տալիս այն կարգը, վորով իրականանում է ինքնահարկադրման սկզբունքը կյանքի մեջ: Մյուս կողմից, այդ վորոշումը ապացույց է այն բանին, վոր մեզանում կան անհամար քանակությամբ հարկեր, վորոնք անցել են ինքնահարկադրման անվան տակ, և վորոնց դեմ անհրաժեշտ է կովել:

7. Հսկողութիւն, վորպեսզի ինքնահարկադրումը կանոնավոր լինի

Տեղերում յեղած ֆինանսական մարմինների վրա պարտականութիւն է դրվում՝ միջոցներ ձեռք առնել այն մարդկանց դեմ՝ վորոնք մեղավոր են ինքնահարկադրման վերաբերյալ որեւք խախտելու մեջ: Տեղական իշխանության ապրիլի գործողութիւնների բոլոր դեպքերի մասին անմիջապես պետք է տեղեկութիւն տալ տեղական ֆինորգաններին (ֆինբաժիններին, ֆինինսպեկտորներին), վորոնք ձեռք են առնում

հարկավոր միջոցները՝ դատախազական իշխանության ներկայացուցչի աջակցությամբ:

Պետք է նկատել, սակայն, վոր ֆինիտոլոմի տեղական մարմինները անկարող են հաջող կռիվ մղել կամայական տուրքերի դեմ, յեթե իրենք հարկատուները և առհասարակ շահագրգռված մարդիկ տեղեկություն չեն տա այդ մասին ֆինանսական մարմիններին:

Ազգաբնակչությունը պետք է համոզված լինի այն բանում, վոր կենտրոնական իշխանության հրատարակած որոշումները պետք է խստիվ անց կացվին կյանքի մեջ և վոր վոչ մի ույժ ընդունակ չէ խախտելու այդ որոշումները:

Շատ հաճախ գյուղացիները այն նպատակով են դիմում ինքնահարկադրման, վորպեսզի դպրոց կամ հիվանդանոց շինեն, ըստ այսմ, առաջուց արդեն հայտնի չե, վոր ինքը ազգաբնակչությունն անկարող է իր ույժերով վերջացնելու շինքը: Սովորաբար, այդպիսի դեպքերում շինքն սկսում են այն հաշվով, թե պակասող գումարը կստանան կառավարությունից: Իսկ կառավարությունն այդ մասին իմանում է միայն այն ժամանակ, յերբ շինքն արդեն սկսված է: Շատ հաճախ գործը վերջանում է նրանով, վոր ազգաբնակչությունն սպասած ոգնությունը չի ստանում, և շինությունը մնում է կիսատ: Այդպիսի դեպքերում ազգաբնակչությունը կրկնակի դժգոհ է մնում խորհրդային իշխանությունից, վորի բյուջեով նախատեսված չեն այն դպրոցների ու հիվանդանոցների շինության ծախսերը, վորոնք սկսվել և պիտի գլուխ գան ինքնահարկադրման կարգով:

Այդ տեսակ միջոցներով մենք արհեստականորեն ստեղծեցինք ազգաբնակչության լայն խավերում դժգոհության պայմաններ:

Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է տանել պետական պարհակը և հենց դրանով մասնակցել խորհրդային պետության շինարարությանը, այն պետություն, վորի մեջ նա ապրում է, և վորը նրան պաշտպանում է: Ինքնահարկադրման կարգով սահմանված ամեն տեսակ տուրքեր պարտադիր են նրա համար միայն այն դեպքում, յեթե նա կամենում է այդ և յեթե նա մասնակցում է այդ տուրքերը սահմանելու վորոշումին: Ամեն տեսակ շեղումն այս կանոնից առաջ է բերում անհարգալից վերաբերմունք ազգաբնակչության կողմից դեպի խորհրդային իշխանությունը, այդ պատճառով ել պետք է հետապնդվի հեղափոխական որոշումների ամբողջ խստությունը:

8. Կամովին տուրքերն ու նվիրատվությունները

Ապրիլին հարկադրումների թվին են պատկանում նաև, այսպես կոչված, կամայական տուրքերն ու նվերները: Ապրիլին հարկերի այդ տեսակը մասսայական բնույթ է ստանում: Նրան դիմում են վոչ միայն տեղական իշխանության առանձին ներկայացուցիչները, այլ և առանձին կոմիտարիատների, կազմակերպությունների ու խմբակցությունների ներկայացուցիչները: Որինակ, այս կամ այն հիմնարկի վոր և է կուլտ — կոմիտե վորոշում է կայացնում իր կուլտուրական աշխատանքն ընդարձակելու մասին. այդ նպատակով կարգադրություն է արվում վերևից՝ վորոշ տոկոս

գուրս գալ (պահել) աշխատակիցներին ստանալիք ուժի-
կից: Բացի այդ, ասենք թե նվիրարեքություն և կա-
տարվում հասարակական ընույթ ունեցող վոր և և
շենք կառուցելու համար: Այդ նպատակով նշանակվում
և հատուկ տուրքառու, վորն սկսում և տուրքերը հա-
վաքել վարչության աջակցությամբ: Պետք է գիտենալ,
վոր այդ տեսակ նվիրատվությունները կարող են տեղի
ունենալ միմիայն կառավարության հատուկ թույլտվու-
թյամբ:

Շատ հաճախ քաղաքացիները տեղական կամ պե-
տական հարկը վճարելիս, համապատասխան հիմնարկ-
ներն ստիպում են նրանց գնել վոր և և փոստանիշ
կամ պատասխանատու մեր ընկերներից մեկն ու մեկի
պատկերը: Նույն այդ յերևույթն և տեղի ունենում
նաև յերկաթուղու տոմսեր գնելիս: Այդ բոլորը ազգա-
բնակչության մեջ առաջ է բերում դժգոհություն, վոր
բնավ ձեռնտու չէ Սորհրդային Իշխանությանը: Հար-
կատուն, գյուղացի յե նա արդյոք, թե արհեստավոր,
առևտրական և, թե վոր և և վարձակալ, — դատում և
այսպես. նրանից վերցրին սահմանված չափով հարկ
և ելի մի բան, բացի հարկից: Ավելորդ գումարի վերց-
նելը նրան դնում և այն մարդու դրության մեջ, վո-
րից ապրիրնաբար պոկեցին վորոշ գումար:

Այս տեսակ յերևույթների դեմ նույնպես անհրա-
ժեշտ և միջոցներ ձեռք առնել, վորովհետև վոչ վոք
իրավունք չունի ապրիրնի ձևով լրացնելու գոյություն
ունեցող որենքները և այդպիսով խախտելու այն կարգը,
վոր դրել և Կենտրոնական Կառավարությունը:

9. Որե՞նք կամովին տուրքերի մասին

Այդ կարգի իրավադանցությունները վոչնչացնելու
և ազգաբնակչությունը ստիպողական կարգով ափելորդ
ծախսեր կրելուց պաշտպանելու նպատակով, ԽՀՄ Կեն-
տրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կո-
միսարների Սորհուրդը դեռ 1924 թվի սեպտեմբեր
8-ին հանել և № 266 վորոշումը:

1. «Ամեն տեսակ կամովին տուրքեր սահմա-
նելը ու վոր և և նպատակի համար նվիրատվու-
թյուններ հավաքելը յուրաքանչյուր անգամ
թույլ և տրվում ԽՍՀ Միության, կամ համա-
պատասխան դաշնակից և կամ ինքնավար Հան-
րապետության Ժողովրդական Կոմիսարների
Սորհրդի, կամ տեղական Նահանգական Գործա-
դիր Կոմիտեի, և կամ դրան համապատասխան
որգանի հատուկ թույլտվությամբ, նայած թե
հիշյալ տուրքերի ու նվիրատվությունների գան-
ձումը ինչպես է յենթադրվում կատարել՝ արդյոք
ԽՍՀ Միության ամբողջ տերրիտորիայում, թե՞ ա-
ռանձին դաշնակից կամ ինքնավար ամբողջ հան-
րապետության կամ որա մի քանի նահանգների
սահմաններում, թե մի միայն տվյալ մի նա-
հանգում կամ դրան համապատասխան վարչա-
կան տեղիտուրյալ միավորում:

Ծանոթություն. — Այս հոդվածի գործողությունը
չի տարածվում — ա) այն տուրքերի վրա, վորոնք
գանձում են կազմակերպությունները, դրանց վե-
րաբերյալ որինական կարգով հաստատված կանո-
նադրքերի ու կանոնադրությունների հիման վրա,

բացառապես իրենց անդամների շրջանում և որևէ-
քով թույլատրված նպատակների համար:

բ) Այն տուրքերի վրա, վորոնք սահմանված
են ինքնահարկադրման կարգով և կարգավորում
են ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի ու ժողովրդական Կոմիսարների Խոր-
հրդի 1924 թվի օգոստոս 29-ի վորոշումով:

2. Ամեն կարգի այն բոլոր հիմնարկները,
ընկերություններն ու անձերը, վորոնք կամե-
նում են կազմակերպել 1-ին հոգվածում հիշված
տուրքերի գանձումը կամ նվիրատվություններ
հավաքելը, պատճառաբանված միջնորդություն
են հարուցում ԽՍՀ Միության ֆինանսների
ժողովրդական Կոմիսարիատի, կամ դաշնակից
հանրապետության պատշաճ կոմիսարիատի և
կամ տեղական նահանգական ֆինանսական բաժ-
նի միջոցով, ցույց տալով յենթադրվելիք տուր-
քերի կամ նվիրատվությունների նպատակը, քա-
նակը, ժամանակն ու ձևը. այս հիմնարկները
հիշյալ միջնորդություններն ստանալուց հետո,
յերկու շաբաթվա ընթացքում, իրենց կարծիքի
մակազրույթամբ, ուղարկում են դրանք 1-ին
հոգվածում թված հիմնարկներից մեկին ու մեկը,
ըստ պատկանելության, թույլտվություն ստանալու
համար: Նախ քան այդ թույլտվության ստա-
նալը արգելվում է կատարել վոր և է տուրքեր
ու նվիրաբերություններ:

3. Վորոշված կարգով թույլատրված կամովին
տուրքերը կամ նվիրատվությունները կարելի է
կատարել միայն այն պայմանների ու սահման-

ների շրջանում, վորոնք ցույց են տրված տվյալ
թույլտվության մեջ, այն ել, հիշյալ տուրքերին
կամ այս ու այն նվիրատվություններին մաս-
նակցելու ցանկություն հայտնող առանձին քա-
ղաքացիների կամովին համաձայնության սկզբ-
բունքով, ըստ այսմ, քաղաքացիներից վոր վորքի
չեն կարող ստիպել վճարելու այդ տուրքերն ու
նվիրատվությունները և վճարելուց հրաժար-
վելու համար վորք վորքի վոր մի պատժի կամ
հետապնդման չեն կարող յենթարկել:

4. Արգելվում է կառավարչական որգանե-
րի (միլիցիայի, վարչական բաժինների և այլն)
մասնակցությունը կամովին տուրքերն ու նվի-
րատվությունները կազմակերպելու և գանձելու
գործում, ինչպես նաև արգելվում է նրանց՝
հրատարակել ամեն տեսակի կարգադրու-
թյուններ, շրջաբերականներ կամ կոչեր՝ հիշյալ տուրքերն
ու նվիրատվությունները հավաքելու համար: Դե
բանում հանցավորները կհետաքվեն իրենց ըս-
տանձնած պաշտոններից և կենթարկվեն քրեա-
կան պետախոսանատվության՝ իշխանազանցու-
թյան համար:

Ծանոթություն. — Արգելվում է տնավարչություն-
ներին կատարել տան կենողների շրջանում
նվիրատվություն կամ գանձել վոր և է տուրք,
բացի բնակարանային ընկերությունների անդամ-
ներից գանձվելիք այն տուրքերից, վորոնք նա-
խատեսված են բնակարանային համապատասխան
ընկերությունների կանոնադրությամբ:

5. Ամեն կարգի այն հիմնարկները, ընկերու-

թյուններն ու անձերը, վորոնք, առանց որինական կարգով ստացված տուլյության, կազմակերպել — հավաքել են վոր և ե տուրքեր կամ նվիրատվություններ, և կամ թույլ են տվել վոր և ե կերպ խախտելու սույն վորոշումը, — յենթարկվում են քրեական պատասխանատվության՝ համապատասխան դաշնակից հանրապետության քրեական որենսդրքի համապատասխան հոդվածներով»:

Դրա հետ միաժամանակ, իՍՀ Ֆինանսների ժողովրդական Կոմիտեիատը շրջաբերաբար կարգադրություն ե անում առանձին հանրապետությունների — հանրապետական ֆինորգաններին — հետևյալ բովանդակությամբ.

1. «Կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ վերջ տալու տեղերում այլ և այլ տուրքերի և նվիրատվությունների գանձելուն, վորոնց համար ստացված չե հարկավոր թուլյությունը՝ Միության ԺԿԽ և ԿԳԿ սույն թվի սեպտեմբեր 5-ի վորոշման 1 և 2 հոդվածների պահանջած կարգով, իսկ այն դեպքում, յերբ կհայտնվի հետագայում, վոր այդ տեսակ տուրքեր ու նվիրատվություններ են գանձվել առանց սահմանված թուլյության, — հանցավորներին յենթարկել պատասխանատվության, նույն այդ վորոշման 5-րդ հոդվածի հիման վրա:

2. Ֆինորգանները յուրաքանչյուր նահանգի սահմաններում հաշվառման պիտի յենթարկեն այն բոլոր կազմակերպությունները, վոր պատշաճ թուլյություն ունեն՝ կատարելու կամո-

վին նվիրատվություններ և գանձելու տուրքեր, պարտավորեցնելով նրանց, նահանգական Գործկոմների պարտադիր վորոշման կարգով, տոմարագրելու նրանց տված թուլյության գրությունները նահանգական ֆինբաժնում. առաջիկայում չպետք ե թույլ տալ կատարել վոր և տուրքի գանձում կամ նվիրատվություն՝ նախ քան հիշյալ թուլյությունների տոմարագրությունը:

3. Կամովին տուրքեր գանձելու կամ նվիրատվություններ կատարելու համար հարուցած գանադան կազմակերպությունների միջնորդությունները նայելիս (քննելիս), ֆինորգանները պետք ե ինկատի ունենան, վոր նահանգական Գործկոմներն իրավունք ունին հիշյալ թուլյությունները տալու միայն այն դեպքերում, յերբ այդ տուրքերի գանձումը կամ նվիրատվությունների հավաքումը յենթադրվում ե կատարել բացառապես տվյալ նահանգի սահմաններում, և ուրիշ նահանգների վրա չեն տարածվի դրանք: Հետևապես, նահանգական Գործկոմների վերջնական թուլյությանը յենթակայ են տեղական կազմակերպությունների միայն մի մասի միջնորդությունները, այսինքն այն կազմակերպությունների, վորոնց գործունեությունը սահմանափակված ե տվյալ նահանգով և նրա սահմաններից դուրս չի գալիս. մնացած բոլոր դեպքերում անհրաժեշտ ե իՍՀ Միության, կամ համապատասխան Դաշնակից Հանրապետության և կամ ինքնավար Հանրապետության ժողովրդական Կոմիտեների խոր-

18

720

հրդի թույլտվութիւնը, նայած թե ինչպէս յենթադրվում զանձեւ այդ տուրքերը կամ նոյն թույլտվութիւնները — ամբողջ Միութեան սահմաններում, թե՞ առանձին դաշնակից կամ ինքնավար հանրապետութեան մեջ և կամ միայն մի քանի նահանգների ծավալում:

4. Ֆինորգանները պարտավորվում են մըշտական հսկողութիւն ունենալ, վորպեսզի տեղերում կատարվելիք տուրքերն ու նվիրատվութիւնները վոյ մի դեպքում ստիպողական տուրքերի բնույթ չկրեն և վորպեսզի զբանք զանձեւու ժամանակ տեղի չունենան ստիպողական միջոցներ՝ հարկադրելու քաղաքացիներին՝ մասնակցելու այդ տուրքերին կամ նվիրատվութիւններին»:

Այս բոլոր կարգադրութիւնները պարտադիր են նաև Անդրկովկասի համար:

Այդպիսով մենք տեսնում ենք, առաջին, վոր կամովին նվիրատվութիւնները կարող են տեղի ունենալ միայն կառավարութեան թույլտվութեամբ, իսկ յերկրորդ, նրանք չպիտի կրեն ստիպողական բնույթ:

Յերբ գյուղացին տեսնի, վոր նրանից կամենում են ստիպողաբար վերցնել, բացի որենցիկ իման վրա զտրութիւն ունեցող հարկից, նաև ինչ վոր մի գումար, նվիրատվութեան անվան տակ, նոր չդեպքում նա պետք է անմիջապէս իմաց տա այդ մասին Ֆինորգաններին, վորպեսզի հանցավորներին պատճառանաւութեան լինեցնեն:

Ազգանրակցութեան կողմից մեզ հույս տալով, որ տեսակ աշխարհութեամբ միայն մենք պիտի կարենք վերջ տալ, վերացնել այն յոյր պայտրին հարկադրութիւնները, վորոնք արդար հուզում ու վրդովմունք են առաջ բերում թե՛ բանավորների, և թե՛ գյուղացիների շարքերում:

.....

վ
ս
կո

ՀՀ Ազգային գրադարան



NL0208286

